

Փոխադարձաբար պարզ բաժանարարներ

Տրված են N և M բնական թվերը: Պետք է հաշվել, թե M հատ թվերի քանի իրարից տարբեր հավաքածուներ գոյություն ունեն այնպիսիք, որոնցում թվերը զույգ առ զույգ փոխադարձաբար պարզ են և բոլորն էլ N -ի բաժանարար են:
Հավաքածուում թվերի հերթականությունը կարևոր չէ, այսինքն $\{1, 1, 2\}$, $\{1, 2, 1\}$ և $\{2, 1, 1\}$ հավաքածուները համարվում են նույնը:

Մուտքային տվյալներ

Մուտքի միակ տողում տրված են 2 բնական թվեր՝ N -ը և M -ը ($1 \leq N \leq 10^{14}$, $1 \leq M \leq 100$):

Ելքային տվյալներ

Պետք է արտածել մեկ թիվ՝ պահանջվող հավաքածուների քանակը:

Օրինակներ

Մուտք Ելք

10	3	5
4	2	3

Բացատրություն

Առաջին օրինակում խնդրի պայմաններին բավարարող հավաքածուներն են՝ $\{1, 1, 1\}$, $\{1, 1, 10\}$, $\{1, 1, 5\}$, $\{1, 1, 2\}$, $\{1, 2, 5\}$:
Երկրորդ օրինակում խնդրի պայմաններին բավարարող հավաքածուներն են՝ $\{1, 1\}$, $\{2, 1\}$, $\{4, 1\}$: